

ԳԵՐԱԳՈՅՆ ՍՈՎԵՏԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Սովետական Միության Գերագոյն Սովետի Նախագահութիւնը, 13 հանրապետութիւններու պահանջով, արտակարգ նիստ մը գումարեց 23 Մարտ 1988-ին: Օրակարգի վրայ էր Ղարաբաղը Հայաստանին միացնելու եւ ատոր հետեւանֆով ստեղծուած կացութիւնը: Երկուֆուկէս ժամ տեւող կարծիքներու փոխանակութենէն եւ ճառախօսութիւններէն յետոյ, Գերագոյն Սովետի Նախագահութիւնը եկաւ այն որոշման, թէ զգացումներու եւ կիրքի ներկայ պայմաններուն մէջ, կարելի չէ սահմանային փոփոխութիւններ կատարել Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ:

Ժողովը բննադատեց Հայաստանի մէջ երեւան եկած այն «խմբակցութիւնները, որոնց արարքներուն հետեւանֆները աննախատեսելի են»:

Գերագոյն ժողովը միաժամանակ կազմեց Յանձնախումբ մը, որպէսզի «արդարութիւնը գործադրէ Ղարաբաղի

ԵԱԲ. էջ 1-էն

մէջ»։ Նոյն յանձնախումբին պարտակա-
նութիւնը պիտի ըլլայ «ուսումնասիրել
Ղարաբաղի մշակութային, ընկերային
եւ տնտեսական կացութիւնը եւ անոր
յետագայ բարելաւման համար ծրագիր
մը պատրաստել»։

Այս լուրը քաղած ենք 24 Մարտին,
լոնտոնեան ԹԱՅՄՁ օրաթերթէն։

Յառաջիկային պիտի անդրադառ-
նանք բոլոր մանրամասնութիւններուն
եւ պիտի կատարենք անհրաժեշտ մեկ-
նաբանութիւնները, երբ մեր տրամադ-
րութեան տակ ունենանք պաշտօնական
ու ամբողջական տուեալները։